



տանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2015 թվականի ապրիլի 30-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վարկային համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագիր» վարկային համաձայնագիրը (Վարկային համաձայնագիր) Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրվել է 2015 թվականի ապրիլի 8-ին:

2. Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը Վարկային համաձայնագրով սահմանված կարգով և պայմաններով Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է երեսուն միլիոն (30,000,000) դոլար գումարի չափով վարկ (Վարկ)՝ Վարկային համաձայնագրով նախատեսված ծրագրի (Ծրագիր) ֆինանսավորմանն աջակցելու համար:

Ծրագրի նպատակը համայնքային և միջհամայնքային ենթակառուցվածքի որակի, օգտագործման և հասանելիության բարելավումն է:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

- տեղական մակարդակով սոցիալ-տնտեսական զարգացմանն ու կարողությունների ստեղծմանն օժանդակություն, այդ թվում՝ համայնքային միկրոծրագրերի իրականացում, ներառյալ, ի թիվս այլնի՝ կրթական, առողջապահական և սոցիալական ծառայություններ (օրինակ՝ դպրոցներ, մանկապարտեզներ, առողջապահական կլինիկաներ, համայնքային կենտրոններ, մարզադահլիճներ, խաղահրապարակներ) ապահովող հիմնական սոցիալական ենթակառուցվածքների կառուցում, վերանորոգում, հիմնանորոգում և/կամ ընդլայնում, ջրամատակարարման և ջրահեռացման

համակարգերի տեղադրում, հիմնանորոգում և ոռոգման ու գյուղերում էլեկտրիֆիկացման փոքր աշխատանքների իրականացում.

- միջհամայնքային սոցիալ-տնտեսական զարգացման նախաձեռնություններին օժանդակություն, այդ թվում տարածքային բարեփոխումների սատարում՝ զարգացման նորարարական նախաձեռնությունների իրականացման միջոցով, որոնցում ներգրավված են երկու կամ ավելի համայնքներ.

- ինստիտուցիոնալ հզորացում և Ծրագրի կառավարում, այդ թվում՝ ինստիտուցիոնալ օժանդակության ապահովում, կարողությունների ստեղծում, տեխնիկական աջակցություն:

**3. Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.**

ա) վճարել սկզբնավճար, որը հավասար է Վարկի գումարի մեկ քառորդ տոկոսին (0.25 տոկոս).

բ) վճարել պարտավճար, որը հավասար է Վարկի չառհանված մնացորդի տարեկան մեկ քառորդ տոկոսին (0.25 տոկոս).

գ) Վարկի մայր գումարի վճարումը կատարել յուրաքանչյուր ապրիլի 1-ին և հոկտեմբերի 1-ին, սկսած՝ 2029 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2039 թվականի ապրիլի 1-ը՝ 4.76 տոկոս և 2039 թվականի հոկտեմբերի 1-ին՝ 4.80 տոկոս.

դ) Վարկային համաձայնագրով նախատեսված Իրականացման համաձայնագրի շրջանակում կատարել իր իրավունքները և պարտականությունները՝ այնպես, որ պաշտպանվեն իր և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի շահերը և իրագործվեն Վարկի նպատակները.

ե) վարել կամ հանձնարարել վարել ֆինանսական կառավարման համակարգ՝ Վարկային համաձայնագրով սահմանված կարգով:

Վարկային համաձայնագրի հավելվածի Բաժին I-ի 3-րդ կետի համաձայն՝ «ՀՄՆՀ» կամ «Ծրագրի իրականացման մարմին» նշանակում է «Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ» կամ դրա իրավահաջորդը, որն ընդունելի է Բանկի համար՝ ստեղծված որպես ՀՄՆՀ օրենսդրությանը համապատասխանող իրավաբանական անձ»: Հարկ է նշել, որ սույն գործով քննության առարկա Վարկային համա-

ձայնագրի կնքման պահին Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամը Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1521-Ն որոշմամբ արդեն իսկ վերանվանվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ: Նույն որոշմամբ սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի իրականացման իրավասությունը վերապահվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2015 թվականի ապրիլի 16-ին հավանություն է տվել սույն գործով քննության առարկա Վարկային համաձայնագրին:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով քննության առարկա Վարկային համաձայնագրով նախատեսված Ծրագիրը չունի հստակ հասցեական բնույթ, ինչը մեծացնում է վարկային միջոցների օգտագործման ռիսկայնության աստիճանը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի խորհրդի, մասնավորապես, 2009 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 22/5, 2011 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 30/3 և 2014 թվականի մարտի 25-ի թիվ 10/2 որոշումներով հաստատված ընթացիկ հաշվետվություններով արձանագրվել են Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից վարկային և դրամաշնորհային միջոցների, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեի միջոցների օգտագործման տարաբնույթ խախտումներ:

Սահմանադրական դատարանն ինչպես իր որոշումներում, այնպես էլ դրանց կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում բազմիցս անդրադարձել է վարկային (փոխառության) միջոցներով ֆինանսավորվող ծրագրային միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին: Սույն գործով քննության առարկա Վարկային համաձայնագիրը ևս պահանջում է հասցեական վերահսկողություն վարկային միջոցների օգտագործման և Ծրագրի իրականացման և կառա-

վարման առումով՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2015 թվականի ապրիլի 8-ին ստորագրված՝ «Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

26 մայիսի 2015 թվականի  
ՄԴՈ-1211